

նույնները: Պուլկար զինուոր մը ունի երկաթեայ փողկապ մը: Զրի՛: Կտաւին կտորը ձեռքէս ինկած էր: Օր մը ետք մորթելու արարքին ամբողջ սաստկութիւնը դեռ անջինջ կը մնայ մտքիս մէջ. պատահամամբ հանդիպեցայ մեր դպրոցի թուրքերէնի ուսուցչին, անուշիկ մոլլա մը: Մորթեր էին գաւակները, առեր ձեռքէն կինը, այրեր հայրը, ողջ-ողջ թաղեր մայրը: Զինքը ողջ ձգող հրաշքը կին մըն էր: Բայց այդ չէ, որ պիտի ուզէի պատմել: Այդ տագնապի օրերուն սա ամէն բանէ զրկուած մարդուն պարպեցի քսակս: Դիմեցի զինուորական հազարապետին անոր կեանքին համար ու պահուեցաւ այդ կեանքը: Իրողութիւն էր, որ 1912ին, այդ քաղաքէն չէ գտնուած ոչ մէկ հայ, որ իրենց ուսուցիչէն տարբեր ապրած ըլլան թուրք ողբերգութեան դիմաց: 1915ին, դեղի համար պիտի չգտնուէր մէկ հատիկ թուրք, որ տարբեր մտածէր, գործէր ջարդարար աւագանիէն: Ու մի մոռնաք այս փաստերուն տարողութիւնը: Կը կրկնեմ. հայ եւ թուրք յարաբերութեանց հարցը հոգեբանական վերլուծում մը չէ ինծի համար: Այլե՛ ներկայ ապրում մը: Թուրքն ու ջարդը մեզի համար նոյն զգայնութեան երկու երեսներն են: Այսպէս չէր, չէ հեռուէն եկողներուն, շրջիկ վաճառորդներուն, մենաշնորհ հալածողներուն, աժան իմաստասէրներուն ու... Մեկիքիսանեանց Մաթիկին համար, որ թուրքը փոխարինած էր աւելի տարտամ, ընդհանուր տարագով մը -ԹՇՆԱՄԻ, այսինքն՝ գիրքերէ իր մտքին կառչած բառ մը, առանց ահաւոր զգայնութեանց խումբին, որով հանգուցուած ան կը խորանար մեզմէ ներս:

Այդ ընդհանրութիւնը այնքան իրական էր, որ թուրքերը կը ճանչնար իրենց կիներէն, այդքան վաղատի ու կը պատմէր անոնց անգթութիւնը նոյնիսկ իրենք գիրենք տուած ատեննին: ԹՂՆԱՄԻ^օ: Բարեկամներ չենք եղած, չեն եղած տէրերն ու գերիները: Այդ մասին օրինագրուելիքը ո՛չ թէ իրողութեան փաստն է, այլ այդ վիճակը հասկնալու մէջ մեր նոր գործիքները, գործարանները, Եւրոպան ու ԺԹ^օ դարու քաղաքական ու ընկերային